USAID
FROM THE AMERICAN PEOPLE

National Association of Regulatory Utility Commissioners

PUBLIC SERVICES REGULATORY COMMISSION

IOWA UTILITIES BOARD



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Իրավական ասպեկտները

Գազամատակարարման համակարգի կարգավորվումն իրականացվում է հետևյալ իրավական ակտերի և պայմանագրերի համաձայն՝

- ✓ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք,
- ✓ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ,
- ✓ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկա,
- ✓ ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգ,
- ✓ ընկերություններին տրված լիցենզիաների պայմաններ,
- ✓ սպառողների և լիցենզավորված անձանց հետ կնքված պայմանագրեր,
- ✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված այլ մեթոդիկաներ, կարգեր և իրավական ակտեր:

Լիցենզավորում

Լիցենզիան տրվում է միայն իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգում գործունեության հետևյալ տեսակներն իրականացնելու համար.

- բնական գազի ներկրում,
- բնական գազի փոխադրում,
- բնական գազի բաշխում,
- գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցում,
- բնական գազի փոխադրման ցանցի կառուցում,
- բնական գազի բաշխման ցանցի կառուցում:

Լիցենզավորում

Լիցենզիա ստանալու հայտի քննարկումը և որոշման ընդունումը

- Լիցենզիա ստանալու համար իրավաբանական անձը Հանձնաժողով է ներկայացնում հայտ՝ 2 օրինակից:
- Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը իր առաջադրած պահանջներին և ձևերին:
- Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝
  - *նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և լիցենզավորման կարգով սահմանված պահանջներին,*
  - *ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ,*
  - *Հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:*

Լիցենզավորում

Լիցենզիա ստանալու հայտի քննարկումը և որոշման ընդունումը (շարունակություն)

- Հանձնաժողովը Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը պահպանվում է Հանձնաժողովում: Հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց և բացակայող փաստաթղթերը լրացնելուց հետո, դրանք մուտքագրում է Հանձնաժողով:
- Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է այն ուսումնասիրելու գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ Հայտատուին Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո՝ 50 աշխատանքային օրվա ընթացքում:
- Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի աշխատանքային խումբը տեղում ուսումնասիրում է լիցենզավորված անձի կողմից կատարված աշխատանքները և համապատասխան գործունեություն իրականացնելու պատրաստականության աստիճանը:

Լիցենզավորում

Լիցենզիա ստանալու հայտի քննարկումը և որոշման ընդունումը (շարունակություն)

- Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե՝
  - *Հայտատուն անվճարունակ կամ սնանկ է ճանաչված,*
  - *Լիցենզավորված գործունեության իրականացումը կհանգեցնի ՀՀ բնական պաշարների անարդյունավետ օգտագործման,*
  - *Հայտում բերված տեխնիկական ցուցանիշները չեն համապատասխանում տեխնիկական կանոնակարգերին,*
  - *Լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշների վրա,*
  - *Հայտատուն չի ներկայացրել Հանձնաժողովի պահանջած լրացուցիչ տեղեկությունները և փաստաթղթերը կամ լրացուցիչ փորձաքննության եզրակացությունները,*
  - *Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են, կեղծ կամ խեղաթյուրված, չեն համապատասխանում ՀՀ օրենքների կամ իրավական ակտերի պահանջներին:*

Լիցենզավորում

Լիցենզիա ստանալու հայտի քննարկումը և որոշման ընդունումը (շարունակություն)

- Լիցենզիա տրամադրելու վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը լիցենզիան՝ 1 օրինակից, հանձնում է լիցենզավորված անձին,
- Լիցենզիայի հետ մեկտեղ Հայտատուին տրվում են Հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները:
- Հայտի մերժման դեպքում, որոշումն ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որոշման պատճենը ուղարկվում է Հայտատուին, որում նշվում են մերժման պատճառները:
- Լիցենզիայի պայմանները խախտելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ տուժանքները.
  - *նախազգուշացում.*
  - *սակագների նվազեցում.*
  - *գործունեության լիցենզիայի կասեցում.*
  - *գործունեության լիցենզիայից զրկում:*

Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգը

Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգում գործում են երկու ընկերություններ.

1. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ, որն իրականացնում է՝
   - *բնական գազի ներկրումը,*
   - *բաշխումը,*
   - *մատակարարումը,*
   - *համակարգի կառավարումը:*

2. «Տրանսգազ» ՍՊԸ, որն իրականացնում է՝
   - *բնական գազի փոխադրումը հանրապետության սահմանից մինչև բաշխող ընկերություն,*
   - *տեղափոխվող և պահեստավորվող բնական գազի հաշվառումը,*
   - *գազի ստորգետնյա պահեստարաններում բնական գազի ներմղումը, պահեստավորումը և բացթողումը:*

Գազամատակարար ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ստեղծվել է ՀՀ էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» ռուսական ընկերության և «Իտերա» միջազգային էներգետիկական կորպորացիայի կողմից՝ 30.08.1997թ. կնքված հիմնադիր պայմանագրի համաձայն:

- ✓ Կանոնադրական կապիտալը կազմում է 880 մլն ԱՄՆ դոլար:
- ✓ Բաժնետոմսերի 80%-ը պատկանում է «Գազպրոմ» ԲԲԸ-ին, 20%-ը՝ ՀՀ կառավարությանը՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության:
- ✓ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գազատար ցանցերի երկարությունը 13396 կմ է, որից շահագործվում է 10630 կմ:
- ✓ 2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել շուրջ 1340 մլն $մ^3$ բնական գազ, որից սպառողներին իրացվել է 1297 մլն $մ^3$:
- ✓ Սպառողների քանակը շուրջ 560 հազար է:

Փոխադրման ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում

«Տրանսգազ» ՍՊԸ-ն ստեղծվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 1999 թվականին:

- ✓ Կանոնադրական կապիտալը կազմում է 3.86 մլն ԱՄՆ դոլար:
- ✓ «Տրանսգազ» ՍՊԸ-ի գազատարների երկարությունը կազմում է 1864 կմ, որից շահագործվում է 1650 կմ:
- ✓ Գազաբաշխիչ կայանների քանակը կազմում է 74 հատ:
- ✓ Գազի ստորգետնյա պահեստ-կայանը իրականացնում է 2 կարևոր գործառույթ՝

- *հանրապետության սպառողներին հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովում,*
- *մատակարարվող գազի սեզոնային և պիկային տատանումների կառավարում:*

Ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով ներդրել է 7.5 մլն ԱՄՆ դոլար, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պահեստավորվող գազի ծավալը 76 մլն $մ^3$-ից հասցնել 120 մլն $մ^3$-ի: Իսկ բարեհաջող պայմանների առկայության դեպքում հնարավորություն կլինի մինչև 2013թ. պահեստավորել 170-180 մլն $մ^3$ բնական գազ:

Ծառայությունների որակի պահանջներ

Սպառողների սպասարկման որակի անհատական ցուցանիշներ

- ✓ Յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը 12 ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ, եթե ընդհատումը ֆորս մաժորի հետևանք է:
- ✓ Ձմեռային ժամանակահատվածում (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 15-ը) բնակիչ-բաժանորդների գազամատակարարումը չպետք է ընդհատվի գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու պատճառով:
- ✓ Մատակարարը բաժանորդի գազամատակարարումը դադարեցնում է վտանգ սպառնացող իրավիճակների մասին ահազանգն ստանալուց հետո հնարավոր կարճ ժամկետում: Մատակարարը վերսկսում է գազամատակարարումը վտանգը վերացնելուց հետո՝ նախապես փոխհամաձայնեցված օրը և ժամին՝ հայտն ստանալուց հետո 36 ժամվա ընթացքում:

Ծառայությունների որակի պահանջներ

Սպառողների սպասարկման որակի անհատական ցուցանիշներ (շարունակություն)

- ✓ Բաժանորդի պահանջով Պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման պահանջի կամ օրենքով սահմանված այլ դեպքերում մատակարարը պարտավոր է դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- ✓ Գազամատակարարման ժամանակավոր դադարեցման դեպքում գազամատակարարումը վերսկսվում է բաժանորդի դիմումի համաձայն, գազասպառման համակարգի՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված ստուգումներից հետո՝ հայտն ստանալուց հետո 36 ժամվա ընթացքում:
- ✓ Գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու կամ նոր բաժանորդների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում, մատակարարն իրավունք ունի Պայմանագրով սահմանված կարգով ընդհատել գազամատակարարումը՝ 1 օր առաջ նախազգուշացնելուց հետո:

Ծառայությունների որակի պահանջներ

Սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն

2006 թվականից սկսած «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձևերով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

- ✓ ստացված դիմում-բողոքների բնույթի և դրանց արձագանքման վերաբերյալ,
- ✓ հեռախոսազանգերի գրանցման վերաբերյալ,
- ✓ սպառողների գազամատակարարման ընդհատման դեպքերի վերաբերյալ,
- ✓ մատակարարված գազի ջերմատվության միջին ցուցանիշների վերաբերյալ:

2010 թվականից սկսած ներկայացնում է տեղեկատվություն նաև՝

- ✓ բաժանորդների միջին քանակի վերաբերյալ (ըստ գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղերի):

Ծառայությունների որակի պահանջներ

Սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն
(շարունակություն)

Սպառողների սպասարկման որակի վերաբերյալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010 թվականին՝

- բաժանորդների գազամատակարարման ընդհատման միջին քանակությունը (SAIFI) կազմում է շուրջ 1.14 ընդհատում/բաժանորդ,
- բաժանորդների գազամատակարարման ընդհատման միջին տևողությունը (SAIDI) կազմում է շուրջ 825 րոպե/բաժանորդ:

Ուստի այս ցուցանիշների սահմանման և շարունակական բարելավման խնդիրը արդիական չի համարվում:

Բնական գազի սպառումը ըստ սպառողական խմբերի 2010 թվականի

